

Մեծամոր համայնքի հարգելի՛ բնակիչներ, հայրենակիցներ.

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի Հանրապետության անկախության 31-րդ տարելիցի կապակցությամբ:

31 տարի առաջ մեր երկիրը՝ Հայաստանի Հանրապետությունը, անկախություն ձեռք բերեց այս մի բուռ հողակտորի վրա: Իրականություն դարձավ Հայաստանի բնակչության և աշխարհասփյուռ հայության երազանքը:

Անկախության տոնն ամենքիս համար ընկալելի է յուրովի և միաժամանակ բոլորինս՝ ազգովի, քանի որ մեր երկիրը զուտ հողակտոր չէ, այլ հայրենիք և միասնականության խորհրդանիշ աշխարհի ողջ հայության համար:

Հայաստանի Հանրապետության անկախությամբ է պայմանավորված մեր ինքնությունը, մեր լինելիությունը:

Հայրենիքի անկախությունն ու ազատությունը վեր է ամեն ինչից, որի համար իրենց կյանքն են գոհել հազարավոր քաջորդիներ: Խոնարհվում եմ բոլոր մարտերում գոհված մեր քաջասիրտ տղաների և դուստրերի հիշատակի առջև, իմ զորակցությունն եմ հայտնում նրանց ծնողներին, զավակներին, քույր-եղբայրներին և բոլոր հարազատներին: Հավերժ փառք ու պատիվ և պայծառ հիշատակ նրանց:

Միրելի հայրենակիցներ, այսօր ավելի քան երբևէ, մենք պետք ունենք համախմբվելու, համատեղելով բոլորիս ուժերը, և միասնաբար դուրս գալու մեր դեմ ծառայած դժվարին իրավիճակից: Հայրենիքը հզորացնելու միակ ճիշտ ուղին մեր համախմբվածությունն է: Կրկին հաղթանակներ կերտելու ճանապարհը մեր միասնականությունն է և հավատը մեր երկրի վաղվա օրվա նկատմամբ: Բոլորին պարզ պետք է լինի, որ ստեղծված իրավիճակը անելանելի չէ, ո՛չ մեր բանակի, ո՛չ մեր ժողովրդի համար: Մենք մեր պատմության թավ էջերում ունենք բազում նման և էլ ավելի բարդ օրինակներ, որոնցից դուրս ենք եկել հաղթանակով, դրա ապացույցը մեր պետության գոյությունն է՝ ավելի հզոր ու իրենց անպարտելի համարող պետությունների անկումից հետո: Այս օրերն էլ լինելու են այդ օրինակների շարունակությունը: Մեզ, ինչպես անցյալի բազում դեպքերում, պակասում է միասնությունն ու հավատը սեփական ուժերի հանդեպ: Եկեք լինենք միասնական այս կարևոր հարցում:

Վերստին շնորհավորում եմ Սեպտեմբերի 21-ը՝ Անկախության տոնը, մաղթում երկրին հարատև խաղաղություն, իսկ հայ ժողովրդին՝ հավատ ու զորություն: